

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ Մարգարյան Ա.Գ.

Երևանի պետ. բժշկական համալսարանի ընտանեկան բժշկության ամբիոն, Երևան, Հայաստան

Տվյալ հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության ընդհանուր բժիշկների առողջական վիճակը: Հարցմանը մասնակցել են 1050 բժիշկ, որոնք աշխատում են Հայաստանի տարբեր բուժօժիմարկներում: Հարցաթերթիկում ընդգրկվել են ընդհանուր հարցեր (տարիք, սեռ, ընտանեկան կարգավիճակ, աշխատանքային ստաժ, աշխատանքի վայր, աշխատանքային պայմաններ), ինչպես նաև առողջության հետ կապված հարցեր և Մասլաչի մասնագիտական այրման ուսումնասիրման հարցաշարը:

Հարցմանը պատասխանել են 832 բժիշկ (203 տղամարդ և 629 կին): Մասնակցության տոկոսը կազմել է 79,2 %: Հարցվածների 71,1 %-ը ներկայումս ունեն տարբեր տեսակի հիվանդություններ և առողջության հետ կապված խնդիրներ, իսկ նրանցից 1/3-ը միաժամանակ ունեն երկու և ավելի առողջական խնդիրներ:

Առողջական խնդիրներ ունեցող բժիշկների մեծ մասը (48,2%) բուժվում են ինքնուրույն, իսկ բժիշկների 21,1%-ը բուժում չեն ստանում:

Հարցմանը մասնակցած 25,4% բժիշկ ունեն հուզական հյուժման բարձր արժեք, 51,3%-ը՝ դեպերսոնալիզացիայի բարձր արժեք, 46,2%-ը՝ մասնագիտական արդյունավետության ցածր արժեք: Հարցմանը մասնակցած բժիշկների 25,0% ունեն ասնագիտական արդյունավետության երեք ենթասանդղակների բարձր մակարդակ: Հուզական հյուժման ենթասանդղակի միջին արժեքը կազմել է $23,1 \pm 5.9$ բալ, դեպերսոնալիզացիայի ենթասանդղակի միջին արժեքը կազմել է $10,2 \pm 3.3$ բալ, իսկ մասնագիտական արդյունավետությունը՝ $33,9 \pm 5.2$ բալ:

Տվյալ հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ բժիշկների շրջանում բարձր է ոչ միայն հիվանդացությունը, այլև մասնագիտական այրման մակարդակը: